ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2017 թվականի N Մ-198-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/4081-17 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 9-ի N 06/3-8/7582-17
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքո-
հիշյալ ամրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի
«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կոմիտեի իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլո-
գիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջա-
նակներում՝


1) iMac համակարգիչներ (48 հատ)՝ 5 տեղ, 551 կգ ընդհանուր քաշով, 63,162.40
ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 3,340 ԱՄՆ-ի դոլար
փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ.

2) համակարգչային մկնիկներ (700 հատ)՝ 69 տեղ, 85.8 կգ ընդհանուր քաշով, 3,920
բրիտանական ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը
կազմել են 822.40 բրիտանական ֆունտ ստերլինգ ու 293,382 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ.

3) համակարգչային ստեղնաշարեր (27 հատ) և գրիչի թանաքներ (10 տուփ)՝ 22.28
կգ ընդհանուր քաշով, 1,366.13 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և
այլ ծախսերը կազմել են 228.83 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԵԼԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ-199-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 10-ի N 01.1/80-2/4129-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 7-ի N 06/3-8/7352-17 եզրակացու-թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմ-նադրամի կոմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրա-գրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հոմբեյս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00111086) 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի ձեռքբերում՝ 347,497 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Կենտրոն» տարածքային համա-կարգման տնօրինության հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2017 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 26983111 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սպառման համա-կարգն էլեկտրական ցանցին միացման աշխատանքների իրականացում՝ 519,166.67 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման հիմքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԾԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2017 թվականի N Մ-200- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-045-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարապյոզյան» բժշ-
կական բարեգործական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2017 թվականի մարտի 6-ի N 01.1/80-2/3711-17 ու Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017
թվականի մարտի 2-ի N 06/3-8/6708-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հովարդ Կարապյոզյան» բժշկական բարեգործական հասարակա-
կան կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվակա-
նի հունվարի 27-ի «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների անվճար բժշկական
օգնություն» N Մ-045-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար
ունի զգալի նշանակություն՝

«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2017 թվականի
փետրվարի 24-ին կնքված՝ N Գ-05/2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը,
որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 829,500 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ-201- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 5-Ի N Մ-1136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղ (WWF-Armenia))

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2017 թվականի մարտի 1-ի N 15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/3852-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 3-ի N 06/3-8/7055-17 եզրակացությունները, **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1067-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia))» N Մ-1136-Ա որոշման 1-ին կետի առաջին ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

«N 04/16-AM0019 պայմանագրում» բառերից հետո կարդալ «և 2017 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 1 լրացուցիչ համաձայնագրում» բառերը և «26,926,773» թիվը փոխարինել «28,839,447» թվով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ-202- Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
9-Ի N Մ-860-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական
կազմակերպություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/4106-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի 7-ի N 06/3-8/7394-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթության իրականացում» բարեգործական կրթական ծրագրի մասին» N Մ-860-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00051316) 2017 թվականի հունվարի 9-ին կնքված՝ N 05-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ - 203 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 7-ի N 01.1/80-2/3741-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 7-ի N 06/3-8/7399-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել հտալիայից անհատ բարերար Թովմա վարդապետ Խաչատրյանի կողմից, միաբանության համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված ժամացույցների (12 տեղ, 135 կգ ընդհանուր քաշով, 2,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 125,400 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ - 204 - Ա
քաղ. երևան**

**«ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 7-ի N 01.1/80-2/3739-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 6-ի N ԱԱՆ/ԱնՄ-2-1/2349-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2017 թվականի մարտի 3-ի N 06/3-8/7052-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Լիանա Բաղրամյանի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամի հասցեով ուղարկված օգտագործված հագուստի և նոր կոշիկների (2 տեղ, 42.7 կգ ընդհանուր քաշով, 200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ- 205 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-142-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 10-ի N 01.1/80-2/4110-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 7-ի N 06/3-8/7398-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից (ՀՎՀՀ 00053474) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2017 թվականի փետրվարի 20-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Հայ-Ռուսական համալսարանի նոր մասնաշենքի շինարարության» ծրագրի մասին» N Մ-142-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ախուրյան Կոոպչին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2017 թվականի փետրվարի 21-ին կնքված՝ N DMQT 001/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,482,350,805 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԵՎԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ- 206 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 10-ի N 01.1/80-2/4173-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 9-ի N 06/3-8/7605-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԻ ԷՅՋ ԷՍ ՎԵՐԻՍԵԼ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01825631) 2017 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ջրատաքացման համակարգի տեղադրման աշխատանքների ուսումնասիրությունների իրականացում և չափագրում՝ 890,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2017 թվականի N Մ - 207 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 10-ին)
քաղ. երևան

**«ԿԻՍԱՔԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/4078-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N ՇՀ/ԱՆՄ-2-1/2537-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 10-ի N 06/3-8/7788-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Մելանյա Շիրինյանի կողմից «Կիսաքաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամի հասցեով ուղարկված օգտագործված հագուստի (մեկ տեղ, 15.4 կգ ընդհանուր քաշով, 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաքաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաքաց լուսամուտներ» բարեգործական հիմադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մարտի 2017 թվականի N Մ - 208 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 10-ին)
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄԱՁԻԱՀ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՃԱՆԱԴԱՐՀԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 3-ի N 01.1/80-2/3598-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 3-ի N 02/14/3290-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N Ն.2/02.1/2801-17, Հայաստանի Հանրապետության կառավարության աղբյուրներ պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 9-ի N 06/3-8/7577-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ., Երևան, Արմյան 50/5, ՀՎՀՀ՝ 02559042) իրականացվող՝ 50,138 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման մատչելիության ապահովում» ՄԱՁԻԱՀ նպատակներին հասնելու ճանապարհին» ծրագիրը (կցվում է):


2. Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության աղբյուրներ պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի, Լոռուի, Գեղարքունիքի, Տավուշի, Գյումրիի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Մ Է



«Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման մատչելիության ապահովում» ՄԱՁԻԱՀ նպատակներին հասնելու ճանապարհին» ծրագիր

1. Ծրագրի նպատակը

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի կանխարգելումը միջառնությունների եւ երիտասարդության շրջանում:

Ողջ աշխարհում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մի զգալի մասը չգիտի իր օրգանիզմում ՄԻԱՎ-ի (մարդու ինունային անբավարարության վիրուս) առկայության մասին: Հայաստանում այդ մասին չգիտի ՄԻԱՎ-ով ապրողների մոտ կեսը: Դա պայմանավորված է նրանով, որ ՄԻԱՎ-ով վարակված մարդը երկար տարիներ (միջինը 8-10 տարի) կարող է առողջության հետ կապված որևէ խնդիր չունենալ և չհմանալ իր վարակված լինելու մասին: Սա է պատճառը, որ հիվանդությունն անտեսվում է հիմնականում ոչ փուլերում, երբ ի հայտ են գալիս որոշակի ախտանշաններ, և նվազում է բուժման արդյունավետությունը: Վարակման պահից ի վեր վարակված մարդը կարող է ՄԻԱՎ-ը փոխանցել ուրիշներին, այդ թվում դեռ չծնված երեխային:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ կարգավիճակի վաղ իմացությունը կարևոր է, քանի որ

- ՄԻԱՎ վարակի բուժումն այսօր հասանելի է և այն ժամանակին սկսելու դեպքում հնարավոր է երկար տարիներ ապրել առողջ, լիարժեք կյանքով, ունենալ ՄԻԱՎ-ից զերծ երեխաներ,
- հնարավորություն է տալիս ձեռնարկելու քայլեր վարակը ուրիշներին չփոխանցելու համար:

Օրգանիզմում ՄԻԱՎ-ի առկայությունը կարելի է հայտնաբերել միայն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությամբ:

Սակայն շատերը, նույնիսկ կարևորելով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը, հաճախ ժամանակ և հնարավորություն չեն ունենում բուժաստատություն դիմելու և հետազոտվելու: Որոշները խուսափում են հետազոտվել տարբեր պատճառաբանություններով. շրջապատը չիմանա ընտանիքի անդամները չիմանան... Որոշ 18 տարեկանից փոքր պատանիներ, որոնք եղել են արտերկրում, վարել են ռիսկային վարքագիծ չեն կարող հետազոտվել առանց ծնողի համաձայնության: Բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման իրականացման խնջընդոտներից հաճախ նշվում է գաղտնիության չպահպանման հնարավորությունը, հատկապես գյուղական վայրերում որտեղ բուժաշխատողները ճանաչում են սպասարկվող բնակչությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը այսօր աշխարհում լայնորեն տարածում է գտնում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ինքնաթեստավորման մեթոդը: Ինքնաթեստավորումը հնարավորություն է տալիս մարդուն հետազոտվել իր համար ավելի ցանկալի և հարմար վայրում (օր. տնային պայմաններում), օրվա ցանկացած պահին, ապահովում է լիարժեք գաղտնիություն:

Ուստի իրականացվող նախագծի շրջանակներում, նպատակ ունենալով նպաստել ՄԻԱՎ վարակի կանխարգելմանը ՀՀ երիտասարդների և միգրանտների շրջանում՝

ՄԻԱՎ-ի, վերջինիս կանխարգելման, հետազոտության կարևորության և ինքնաթեստավորման հնարավորության վերաբերյալ կրթական/տեղեկատվական սեմինարների/անհատական զրույցների միջոցով կիրառելվեն/կկրթվեն մոտ մոտ 30 000 երիտասարդներ և կամ միգրանտներ: Նրանցից 15 000-ին կտրվի ինքնաթեստավորման միջոցով իրենց ՄԻԱՎ կարգավիճակն իմանալու հնարավորություն: Արդյունքում կավելանա ՀՀ-ում ՄԻԱՎ կարգավիճակն իմացողների թիվը,

Գործադիր տնօրեն


Ա. Տեր-Հովակիմյան

		հանրությանը կներկայացվի ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության կարևորությունը և ինքնաթեստավորման հնարավորությունը: Վերոնշյալ կրթական/տեղեկատվական սեմինարների/անհատական զրույցների միջոցով իրազեկման աշխատանքները իրականացվում են ՀՀ-ի աշխատակիցների կողմից, որոնց հետ կնքվել են Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր: Վերջիններիս վճարման համար նախատեսված գումարների համար հարկային արտոնություն չենք հայցում: Ինքնաթեստավորման փաթեթները ծրագրի շահառու համարվողներին տրամադրվելու են անհատույց:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՎ-ի հարցերի համատեղ ծրագիր, Շվեյցարիա Ժնև 27, CH-1211, 20 Ափիա պող.
4.	Ծրագիրը կատարողը	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, ՀՀ. ք. Երևան, Աբովյան 50/5, ՀՎՀՀ 02559042
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության 10 մարզեր, Առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	50 138 /հիսուն հազար հարյուր երեսունութ/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ երիտասարդներ և միգրանտներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.03.2017-31.12.2017թթ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ինքնաթեստավորման փաթեթների ներմուծում՝ 50 138 /հիսուն հազար հարյուր երեսունութ/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամով
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ինքնաթեստավորման փաթեթների ներմուծում՝ 50 138 /հիսուն հազար հարյուր երեսունութ/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամով
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ	ՀՀ Առողջապահության նախարարություն


Գործադիր տնօրեն

Ա. Տեր-Հովակիմյան

	կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Մոնիթորինգային այցեր և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրին, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



Գործադիր տնօրեն



Տեր-Հովակիմյան



**ՀԱՅԱՆՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 մարտի 2017 թվականի N Մ - 209 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-080-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/4107-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 7-ի N 06/3-8/7395-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 6-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2017-2018 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-080-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2017 թվականի փետրվարի 15-ին կնքված՝ N A/012/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2016 թվականի ֆինանսական հաշվետվությունների, Բաց հասարակության հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվական փաթեթի աուդիտի և դրամաշնորհային ու այլ գործընթացների վերահսկողության համակարգի արդյունավետության գնահատման գործում մասնաճյուղին աջակցելու նպատակով համաձայնեցված ընթացակարգերի իրականացում՝ 29,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 112756936 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած

ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,217,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2016 թվականի մայիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 852,250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 27-ին կնքված՝ N IC-1607 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ 1,704,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2017 թվականի N Մ- 210 - Ա
քաղ. երևան

«ՌԵՆԵՍԱՆՍ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԿԱՆԱՆՑ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 24-ի N 01.1/80-2/3031-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 22-ի N 06/3-8/5476-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Կամուրջ դեպի լույս» հիմնադրամի կողմից, որպես նվիրատվություն, «Ռենեսանս» ստեղծագործող կանանց կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (օգտագործված հաքուստ, նոր խաղալիքներ և առամի մածուկ՝ 8 տեղ, 370 կգ ընդհանուր քաշով, 151,7 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի Բաղանիս բնակավայրում անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Ռենեսանս» ստեղծագործող կանանց կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 մարտի 2017 թվականի N Մ - 211 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի մարտի 10-ի նիստին)
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹՅ ԾՐՋԱՆԻ ՏՈՂ ԵՎ
ՈՒՒՏԱՋՈՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՐՋԱՆԻ ՍԱՐԳՍԱՇԵՆ ԳՅՈՒՂԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 9-ի N 01.1/80-2/3854-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 13-ի N 02/14/3740-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 3-ի N 06/3-8/7044-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,064,935 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տոլ և Ուխտաձոր, ինչպես նաև Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգերի թերությունների վերացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյ Ջի Այ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00464211) 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված N ԼՂ/Ջ-ԹՎ-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղի ջրամատակարարման համակարգի թերությունների


վերացման շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,013,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էյ Ջի Այ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00464211) 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված N ԼՂ/Ջ-ԹՎ-03/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հադրութի շրջանի Տոլ գյուղի ջրամատակարարման համակարգի թերությունների վերացման շինարարական աշխատանքների իրականացում՝ 4,626,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էյ Ջի Այ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00464211) 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված N ԼՂ/Ջ-ԹՎ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղի ջրամատակարարման համակարգի թերությունների վերացման շինարարական աշխատանքների իրականացում՝ 2,425,435 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«01» մարտի 2017թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի Տոդ և Ուխտածոր, ինչպես նաև Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգերի թերությունների վերացում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի Տոդ և Ուխտածոր, ինչպես նաև Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղերի բնակիչներին խմելու ջրով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործոր	Ամհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երեսան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի Տոդ և Ուխտածոր, Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղերը, ջրամատակարարման բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 8.064.935,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդի շրջանի Տոդ և Ուխտածոր, Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղերի բնակիչները

43/1

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ փետրվարի 14 -ից մինչև 2017թ մայիսի 14-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ փետրվարի 14-ից մինչև 2017թ. մայիսի 14-ը ընկած ժամանակահատվածում վերը նշված գյուղերի ջրամատակարարման համակարգերի առկա թերությունների վերացում՝ 8.064.935,00 դրամ արժողությամբ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Եյ Ջյ Այ» ՍՊԸ-ի կողմից ջրամատակարարման համակարգերի թերությունների վերացում. Հաղորդի շրջանի Տոդ գյուղ՝ 4.626.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի, Ուխտածոր գյուղ՝ 1.013.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղ՝ 2.425.435,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հիմնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

43/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2017 թվականի N Մ-212-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 13-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված շատրվանային սարքավորումները (2 տեղ, 1,359 կգ ընդհանուր քաշով, 36,423 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 360,532 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԱՏՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մարտի 2017 թվականի N Մ - 213 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի մարտի 13-ի համաձայնեցման թերթը, որ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել BRIU GmbH ոչ առևտրային կազմակերպության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված դեղորայքի (5 տեղ, 78 կգ ընդհանուր քաշով, 600 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ